Ք.Երևան 29.12.2025թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

/Զավեն Վարդանյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու ընթացքում կատարված քննության արդյունքների մասին/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմենակ Աղամյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, ուսումնասիրելով ,,ՏԵՏ ԻՆՎԵՍՏ,, ՍՊԸ-ի /այսուհետ դիմումատու/ տնօրեն՝ Տաթևիկ Հարությունյանի 07.10.2025թ.-ի դիմումը, ուղղված ,,ՍԳԿԿ,, ԻԿ-ի տնօրեն Ա.Ելինյանին, որով վերջինս իր բողոքով խնդրել է հեռացնել Զավեն Վարդանյանին /այսուհետ կառավարիչ/ կազմակերպությունից եկան այն եզրակացության, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ:Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 24.10.2025թ., և 20.11.2025թ.-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված բողոքի, «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ն 06.05.2022թ-ի սնանկության դատարանի կողմից ճանաչվել է սնանկ, իսկ նույն դատարանի 17.05.2022թ-ին ընկերության սնանկության գործով կառավարիչ նշանակվել է Զավեն Գեւորգի Վարդանյանը: Հայտնել է, որ «Տէտ-Ինվեստ»ՍՊԸ-ի գործերով զբաղվել է իր նախկին ամուսինը Էդվարդ Մխիթարյանը և ինքը չնայած հանդիսացել է որպես տնօրեն, սակայն ոչնչից տեղյակ չի եղել: Ըստ դիմումատուի կառավարիչը ելնելով իր անձնական շահերից /իր ենթադրությունն է/ համագործակցելով Էդ. Մխիթարյանի հետ երեք տարում «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ն հասցրել է լիարժեք սնանկության եւ իր ծնողների բնակարանը, որը հանդիսանում է որպես գրավի առարկա ,,Ամիօ բանկ,, ՓԲԸ-ում, վարկի դիմաց կարող է աճուրդով վաճառվել:

Իր բողոքում դիմումատուն նշել է, որ 2022թ-ի հունիսի 13-ին Էդվարդ Մխիթարյանի դիմումով, դատավոր Լ. Սաղոյանը թույլ է տալիս «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ին 10490 կգ ապրանքը մաքսազերծել եւ ներմուծել Հայաստանի Հանրապետություն: Ըստ դիմումատուի, դատարանը իր որոշմամբ նշում է, որ ապրանքը ենթակա իրացման կառավարչի հսկողության տակ եւ ստացված գումարը պետք է մուտքագրել «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ի հատուկ հաշվին: Դիմումատուն իր դիմումում նշում է, որ 2022թ-ի հոկտեմբերի 13-ին դատավորը իր նամակով հայցում է Զ. Վարդանյանից ներմուծված ապրանքի մասին: 2022թ-ի հոկտեմբերի 20-ին, կառավարիչը իր պատասխան նամակում նշում է, որ ըստ ընկերության ներկայացուցիչի բանավոր հայտարարության, ընկերությունը իր բնականոն գործունեության շրջանակներում 10490,47 կգ բրուտտո զանգվածով հրուշակեղենը մասնակի վաճառել է, սակայն մինչեւ օրս գնորդը գումարը չի վճարել առաջացնելով «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ի նկատմամբ դրամային պարտավորություն, այս իսկ պատճառով էլ վերոնշյալ գործարքից սնակնության հատուկ հաշվին գումարներ մուտք չի եղել: Ըստ դիմումատուի, սա կոլեգայի որակավորման չափն է: Ըստ դիմումատուի, իրականում 2022թ-ի հունիս հուլիս ամիսներին Է. Մխիթարյանը «Տէտ-ինվեստ»-ի 34.652.000 ՀՀ դրամի ապրանքը վերագրում է իր նորաստեղծ «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի վրա, իհարկե, Զ. Վարդանյանի ջերմ աջակցությամբ:Ըստ դիմումատուի նրանք պարզապես գողանում են «Տէտ-ինվեստ»-ՍՊԸ-ի 34.652.000 ՀՀ դրամի

ապրանքը եւ ոչ միայն դա:Ըստ դիմումատուի, «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ի ապրանքի մնացորդը՝ 40-50 միլիոն ՀՀ դրամի չափով, ՀՀ տարբեր խանութների ցանցերում, նույնպես վերագրվում է «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի վրա, Զ. Վարդանյանի լուռ համաձայ նությամբ:

Ըստ դիմումատուի միայն 2025թ- ի ապրիլի 14-ին գրված իր նամակ-պահանջից հետո, կառավարիչը ապրիլի 30-ին հայց է ներկայացրել դատարան, «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի հանդեպ 34.652.000 ՀՀ դրամը բռնագանձելու համար, սկայն ըստ դիմումատուի կառավարիչը մոռացել է, պատահաբա՞ր, նշել նաեւ հայցում «Ալֆաբեթ»ՍՊԸ-ից 11.000.000. ՀՀ դրամ տույժի բռնագանձման մասին, երեք տարի «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ի 34.652.000 ՀՀ դրամ օգտագործելու դիմաց:

Ըստ դիմումատուի, ներկայումս «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ի ընդհանուր պարտքը կազմում է 65.000.000 ՀՀ դրամ, իսկ բաց թողած եկամուտը՝ 70-80 միլիոն դրամ:

2025թ. սեպտեմբերի 23-ին դիմումատուն դիմել եմ ՀՀ սնանկության դատարան Զ. Վարդան յանին կառավարիչի պաշտոնից ազատելու միջնորդությամբ: Բողոքը ուղարկելով ինչպես ՀՀ Դատախազություն, այնպես էլ ՀՀ Արդարադատության նախարարություն խնդրել ով տալ պրոֆեսիոնալ գնահատական նրա գործունեությանը, որոշել քրեական բաղադրիչի առկայությունը նրա գործունեության մեջ եւ որակավորման վկայականից զրկելու հարցը:

Ելնելով վերոհիշյալից՝ դիմումատուն խնդրել է Զավեն Վարդանյանին «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությունից հեռացնել:դիմումատուն նշել է նաև, որ սույն բողոքը եւ ԻԿԿ-ի պատասխանը ինքը ուղարկելու է ՀՀ Դատախազություն կցելու ընդհանուր գործին:

Այնուհետև դիմումատուի կողմից ներկայացվել է լրացուցիչ դիմում,որով վերջինսհայտնել է, որ «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ի պարտապանների հանդեպ հայցերը ներկայացնելուց, չի պահանջել նրանցից փաստաբանի վարձատրությունը: Ըստ դիմումատուի, կառավարիչը վճարել է 1.500.000 ՀՀ դրամ «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ի հատուկ հաշվից փաստաբան Էդգար Հակոբյանին: Ըստ դիմումատուի, «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ն կորցրել է 1.500.000 ՀՀ դրամ անհիմն և այդ գումարը ըստ դիմումատուի պետք է ետ վերադարձվի:

Դիմումատուն իր դիմումով նշել է նաև, որ «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 2025թ. ապրիլի 30-ին «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի հանդեպ հայց ներկայացնելուց, փաստաբան՝ Էդգար Հակոբյանի վարձատրությունը 1.000.000 ՀՀ դրամի չափով դրվել է պարտապանի «Ալֆաբեթ»ՍՊԸ-ի վրա:

Իր դիմումով դիմումատուն նշել է, որ սնանկության 3 տարիների ընթացքում, «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ի սեփականության 3 ավտոմեքենաները շահագործվում էին «Ալֆաբեթ»ՍՊԸ-ի կողմից, անվճար:Կառավարիչը 2022թ-ի հոկտեմբերի 14-ին պարտապանին պատկանող գույքի գույքագրման մասին ակտում, «Տէտ-ինվեստ»ՍՊԸ-ին պատկանող 3 ավտոմեքենաները հանձնել է ի պահ «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի տնօրեն Էդվարդ Մխիթարյանին: Էդ. Մխիթարյանը պաշտոնապես ոչ մի առնչություն չուներ «Տէտ–ինվեստ» ՍՊԸ-ի հետ, չուներ լիազորագիր իր կողմից ստորագրված: Դիմումատուի համոզմամբ, Է.Մխիթարյանը կեղծելով իր ստորագրությունը կատարում էր իր չարամիտ գործերը, կառավարիչի լուռ համաձայնությամբ: Դիմումատուն իր դիմումով հայտնել է, որ 2025թ-ի սեպտեմբերի 1-ին ինքը դիմել է ՀՀ Դատախազություն, Էդ. Մխիթարյանի հանդեպ քրեական գործ հարուցելու դիմումով՝ իր ստորագրությունը դատական գործում կեղծելու, «Տէտ-ինվեստ» ՍՊԸ-ին արհեստականորեն սնանկացնելու պատճառով:

Հարկ է նշել, որ 24.10.2025թ.-ին նշանակված նիստին, բանավոր կերպով իր բողոք դիմումն է ներկայացրել ընկերության տնօրենի լիազորված անձ՝ Ռուդիկ Ռազմիկի Հարությունյանը /Լիազորագիր՝ տրված 24.09.2024թ.-ին, ընկերության տնօրեն Տաթևիկ

Հարությունյանի կողմից/, որը պնդել է ընկերության տնօրենի կողմից ներկայացված դիմում բողոքը:

Նախ հարկ է նշել, որ բանավոր կերպով իր դիմում բողոքը ներկայացնելու ժամանակ, պարտապան ընկերության տնօրենի ներկայացուցչը հայտնեց, որ նա այլ ճանապարհ չի գտել պաշտպանելու իր բնակարանը աճուրդի իրացումից, քան այս տարբերակը, քանի որ կառավարիչը պատրաստվում է իրեն պատկանող բնակարանը դնել աճուրդ վաճառքի:Միաժամանակ նշելով, որ իր բնակարանը հանդիսանում է որպես գրավի առարկա ,,Ամիոբանկ,, ՓԲԸ-ում, իսկ բանկի պահանջը գրանցված է պարտապանի սնանկության ծավալում որպես ապահովված պահանջ:

Բացի այդ հարկ է նշել նաև, որ պարտապան ընկերության բանավոր հայտարարությունները կապված էին մասնավորապես, ընկերության տնօրենի և նրա ամուսին՝ Էդ. Մխիթարյանի հետ ունեցած փոխհարաբերությունների, որի արդյունքում Էդ. Մխիթարյանը կատարել է /ըստ ներկայացուցչի/ բազմաթիվ կեղծիքներ, այն էլ՝ սնանկության գործով կառավարչի իմացությամբ:Դիմումատուն հայտնեց, որ ինքը սնանկության վարույթի նկյութերին ծանոթացել է 2024թ.-ի սեպտեմբեր ամսին, սակայն հատկանշական է այն հանգամանքը, որ ընկերության տնօրենի կողմից բողոք դիմումները, ինչպես ՀՀ գլխավոր դատախազությանը, այնպես էլ ՀՀ Արդարադատության նախարարությանը և ՍԳԿԻԿԿ-ին ներկայացրել է միայն 2025 թ.-ին, մասնավորապես ԻԿԿ-ին է ներկայացվել 07.10.2025թ.-ին, այսինքն՝ մեկ տարի և ավել ժամանակ առաջ:

Դիմումատուի լիազորված անձի կողմից բանավոր ներկայացված հայտարարությամբ, վերջինս խնդրել է հանձնաժողովին ուշադրություն դարձնել այն հանգամանքերին, որ կառավարիչը որևիցե մի գործողություն չի կատարել, հետևելու մաքսայինից ապրանքների վաճառքի, ինչպես նաև այդ վաճառքից առաջացած գումարը սնանկության հատուկ հաշիվ մուտքագրելու առընչությամբ:

Միաժամանակ դիմամումատուի ներկայացուցիչը բանավոր կերպով հայտնեց, որ կառավարիչի կողմից ներկայացվել են ըստ էության սխալ հայցադիմումներ, մասնավորապես՝ նախ կառավարիչի կողմից ,,Ալֆաբետ,, ՍՊԸ-ի նկատմամբ ներկայցված հայցադիմումով, կառավարիչը պատասխանողից չի պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:Իսկ մեկ այլ հացադիմումներով, կառավարիչը հայցադիմումների մեջ չի ներառել պատասխանողներից բռնագնման ենթակա գումարում, բաստաբանական ծախսերը:Միաժամանակ լիազորված անձը կարգապահական հանձնոժողովի ուշադրությանը հրավիրեց այն հանգամանքը, որ պարտապանի սնանկության ծավալում ընդգրված մեքենաները չեն ներառվել գնահատված գույքերի ցանկում և առանձին կարգով չեն իրացրվում, նշելով որ այդ մեքենաներին պարտապն ընկերության տնօրենի լիազորված անձը, որը հանդիսանում է նաև պարտապան ընկերության հայրը, ունի այդ ավտոմեքենաների գնորդներ:Միաժամանակ լիազորված անձը հանձնաժողովի ուշադրությանը հրավիրեց այն հանգամանքը, որ ընկերությանը պատկանող ացտոմեքենաները կառավարիչը առանց որևիցե մի հիմքերի հանձնել է ,,Ալֆաբեթ,, ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Մխիթարյանին:

Հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանի այն հարցին, թե իր կողմից ներկայացված բանավոր դիմումին, արդյոք լիազորված անձը կարող է ներկայացնել որևիցե մի փաստաթղթավորված ապացույցներ թե ոչ, դիմումատուի լիազորված անձը հայտնեց, որ այլ ապցույցներ չունի:

Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 3.4 կետի հիմքով, կառավարիչի կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով վերջինս հայտնել է, որ

Էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է ծանուցում կարգապահական վարույթի լսումներ հրավիրելու մասին, ինչպես նաեւ ծանոթացել է «Տէտ Ինեստ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տաթեւիկ Հարությունյանի կողմից ներկայացված բողոքին, որի վերաբերյալ հայտնել է, որ այն ակնհայտ անհիմն է, այն լի է մի շարք փաստեր եւ տեղեկությունների աղավաղումներով, լի է իր անձի վերաբերյալ կատարված զրպարտություններով:

Կառավարիչը հայտնել է, որ ներկայացված բողոքի բովանդակությունից բխում է, որ բոլոր դժգոհությունները եւ դրա մեջ նշված ենթադրյալ խախտումները, որոնք իրեն է վերագրվել, վերաբերվում են 2022թ.-ին, 2023թ.- ին եւ 2024 թ.-ին տեղի ունեցած իրադարձություններին, որոնց մասին հենց ընկերության տնօրենը քաջատեղյակ է եղել հենց նույն ժամանակահատվածում, քանի որ հենց նա մասնակից է եղել այդ գործողություններին:

Անդրադառնալով դրանում նշված հանգամանքներին կառավարիչը անդրադարձել է բողոքում նշված հանգամանքներին առանձին-առանձին, քանի որ իր գործողությունները սույն սնանկության գործով եղել են օրինական, եւ իր կողմից իր լիազորությունների կամ պարտականությունների որեւէ խախտումներ, կամ չարաշահումներ չեն կատարվել, իսկ պարտապանի կողմից նկարագրվածը զուտ իրեն դատարանում եւ այլ մարմիններում զրպարտելու փորձեր են, որոնք բնականաբար առաջացնելու է պարտապան ընկերության տնօրենի համար համապատասխան իրավական հետեւանքները:

Կառավարիչը հանձնաժողովին ամենայն պատասխանատու կերպով հայտարարել է, որ ինքը որպես սնանկության գործով կառավարիչ, սույն սնանկության վարույթում որեւէ անձի հետ չի գտնվում այնպիսի հարաբերությունների մեջ, որպիսիք պարտապան ընկերության տնօրենի կողմից մեկնաբանվում են այնպիսի լույսի ներքո, որ իբր ինքը գործում է պարտապան Ընկերության շահերի դեմ:

Ընդհակառակը, ըստ կառավարիչի պարտապան ընկերության տնօրենը ինքը անտեսում է այն իրողությունը, որ սնանկության վարույթի սկզբնափուլում հենց ինքն է դատարանին ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, որտեղ ներառել է նաեւ «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի պարտավորությունները՝ նշելով, որ առողջացման ծրագրի շրջանակներում «Ալֆաբեթ» ՍՊԸ-ն կմարի մաս-մաս իր պարտավորությունները պարտապանի նկատմամբ: Անգամ հիշյալ ընկերությունը ինքն է իր պարտքը ճանաչելու ուղղված գործողություններ կատարելով՝ այդ մասին պարտավորագիր եւ այլ փաստաթղթեր ներկայացրել դատարանին՝ հավաստելու համար իր պարտավորությունները պարտապանի հանդեպ եւ այդ կերպ մաս կազմելով ֆինանսական առողջացման ծրագրի: Այդ իսկ պատճառով սնանկության վարույթի սկզբնափուլում «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի դեմ գումարի բռնագանձման հայցապահանջ չի ներկայացվել, դրա փոխարեն դատարան է ներկայացվել դեբիտորական պարտքերի հավաքագրման նպատակով շուրջ 200 քաղաքացիական գործեր, որոնցից մեծամասնությունը, մոտավորապես 85%-ը բավարարվել են, եւ դեռ որոշ գործերը գտնվում են ընթացքի մեջ:

Իր դիրքորոշմամբ կառավարիչը հայտնել է, որ ինչ վերաբերվում է ներմուծված գույքերի արգելանքները վերացնելու եւ դրանց ներմուծումը թույլատրելուց հետո տեղի ունեցած իրադարձություններին, ապա հենց պարտապան ընկերության տնօրեն՝ Տաթեւիկ Հարությունյանն է դիմել դատարան միջնորդությամբ, որով խնդրել է վերացնել կիրառված արգելանքները եւ թույլատրել ապրանքների ներմուծումը, որն էլ դատարանի որոշմամբ թույլատրվել է: Դրանից հետո թե ինչ գույքեր են մաքսազերծվել եւ ինչպես են դրանք իրացվել, ինչ եղանակով է Է. Մխիթարյանը այն ըստ պարտապանի տնօրենի իրացրել, կամ թե ինչու է պարտապան ընկերության տնօրենը լիազորել կամ թույլատրել Է. Մխիթարյանին՝ պարտապան ընկերության ներմուծված ապրանքները վաճառել, կառավարիչը դրանց մասին որեւէ տեղեկություններ չի ունեցել, պարտապան ընկերության

տնօրենը երբեք նման տեղեկություններ իրեն չի փոխանցվել:Կառավարիչը հայտնել է, որ այդ ժամանակահատվածում ընկերությունը նոր էր սնանկ ճանաչվել, վերջինիս գործունեությունը կասեցված չէր եւ շարունակում էր գործել իր բնականոն գործունության շրջանակներում: Ավելին՝ կառավարիչը համոզված է, որ հենց պարտապան ընկերության տնօրենն է լիազորագիր տալու միջոցով թույլատրել Է. Մխիթարյանին կատարել ներմուծման ձեւակերպումները եւ իրացնել այդ ապրանքները:Իսկ նման համոզմունքը բխում է նրանից, որ այդ ժամանակահատվածում պարտապան ընկերության տնօրենը իր ամուսինը հանդիսացող Է. Մխիթարյանի հետ ունեցել է լավ փոխհարաբերություններ, անգամ դեռեւս 18.04.2024թ.-ին անձամբ տնօրեն Տ. Հարությունյանի հետ միասին կառավարիչն է գնացել ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ եւ ընկերության ընթացիկ հաշվին գտնվող մնացորդային գումարները փոխանցել են սնանկության հատուկ հաշվին, որի ժամանակ նաեւ ներկա է եղել Տ. Հարությունյանի ամուսին՝ Է. Մխիթարյանը: Ավելին, անգամ պարտապան ընկերության տնօրեն Տ. Հարությունյանը ինքն է այդ պահին բանավոր հայտարարել, որ իր ամուսինն է, նրան վստահում է քանի որ ամուսին է մշտապես զբաղվել և զբաղվում ընկերության գործունեությունով եւ որ նա տեղյակ է բոլոր գործընթացներից, և ամուսնալուծության, կամ նրանց միջեւ վեճերի վերաբերյալ որեւէ տեղեկություն անգամ կառավարիչին չեն փոխանցել: Ըստ կառավարչի, նման պայմաններում տարօրինակ է պարտապանի տնօրենի այն պնդումը, թե իբր իր անգործության հետեւանքով է ապրանքները ներմուծումից հետո իրացվել «Ալֆաբեթ» ՍՊԸ-ին: Կառավարիչը համոզված է, որ տնօրենը ինքը անձամբ տեղյակ եղել այդ գործարքներից եւ համաձայն է եղել դրանց եւ առանց տնօրենի կողմից լիազորագրեր կամ անձամբ ստորագրելու մաքսային մարմիններում անհնարին էր ներմուծումները կատարել, մաքսատնից ապրանքների դուրս բերելը կամ հարկային հաշիվները դուրս գրելը և եթե տնօրենը չցանկանար այդ գործընթացին մասնակցել կամ թույլ չտար, ապա միանշանակ կարող էր հարկային եւ մաքսային ծառայությանը դիմելով դադարեցնել այդ ապրանքների ներմուծման կամ վաճառքի գործընթացը, իսկ դիմումով գոնե իրեն կհայտներ այդ մասին, սակայն տնօրենը որեւէ գործողություններ չի կատարել: Ըստ կառավարիչի նշված բողոքի ներկայացումը բացառապես պայմանավորված է նրանով, որ պարտապան ընկերության տնօրենի եւ նրա ամուսնու միջեւ սկսվել են ընտանեկան վեճեր և այդ լույսի ներքո, կինը /ընկերության տնօրենը/ փորձում է սնանկության վարույթում շահարկման առարկա դարձնել իր ամուսնու գործողությունները, որոնցից անձամբ ինքն է տեղյակ եղել, մասնակցել եւ համաձայնվել, որոնց մասին կառավարիչին չի տեղեկացրել, ունենալով հստակ օրենսդրական պարտականություններ:

Իր դիրքորոշմամբ կառավարիչը նշել է, որ ամբողջ սնանկության վարույթի ընթացքում պարտապան ընկերության տնօրենը մեկ անգամ է իրեն դիմում հասցեագրել 09.09.2024թ.-ին՝ խնդրելով բոլոր ծանուցումները կատարել դիմումում նշված հասցեով:Իսկ այնուհետև մեկ անգամ դիմում է ներկայացրել 14.04.2025թ.-ին հայտնելով, որ ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված ամսական վճարումները իրականացվում էր «Ալֆաբեթ» ՍՊԸ-ի կողմից եւ հաշվի առնելով, որ ծրագիրը դադարեցվել է՝ խնդրել է ձեռնարկել միջոցներ, «Ալֆաբեթ» ՍՊԸ-ից այդ գումարները գանձելու ուղղությամբ: Նշված դիմումի ներկայացումից հետո իմ կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան եւ հայցադիմումը ընդունվել է վարույթ թիվ ԵԴ2/4630/02/25 քաղ. գործի համարով եւ քննվում է մինչ օրս: Եվս մեկ անգամ դիմում է ներկայացրել ինձ 06.08.2025թ.-ին՝ խնդրելով նշված քաղ. գործով կատարել ինչ- որ դատավարական գործողություններ, որի պատասխան գրությունը ժամանակին ուղարկվել է պարտապանին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կառավարիչը հայտնել է, որ ինքը միայն կատարել է օրենքով սահմանված կարգով իր վրա դրված ողջ լիազորությունները պատշաճ ձեւի, պահպապանել է վարույթի բոլոր մասնակիցների շահերի եւ իրավունքների հավասարակշռությունը, իր կողմից չի դրսեւորվել կողմերից որեւէ մեկի նկատմամբ կողմնակալ վերաբերմունք, կամ անհարկի ձեւով վարույթի ընթացքը երկարացնելու, ձգձգելու դեպքեր, հակառակ դեպքում սույն գործով, որը տեւում է արդեն շուրջ 3 եւ ավելի տարիներ, եւ այդ ընթացքում թեկուզ պարտատերերի կողմից գոնե մեկ անգամ բողոք կլիներ ներկայացված իր գործողությունների կամ անգործության վերաբերյալ:Սակայն նման բողոքներ առկա չեն եւ չի էլ եղել, որն էլ վկայում է իր կողմից կատարված գործողությունների օրինաչափությունը:Իսկ մնացած հուզական եւ ընտանեկան վեճից բխող ձեւակերպումները եւ իր անձին ուղղված զրպարտությունները իրականությանը չեն համապատասխանում եւ սուտ են:Դեռ ավելին՝ կառավարիչի կողմից Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել հայցադիմում պարտապանի տնօրենի դեմ՝ իրեն զրպարտելու եւ վիրավորելու կապակցությամբ, որն էլ 20.10.2025թ. ընդունվել է վարույթ /քաղ. գործ՝ ԵԴ2/11000/02/25 / :

Վերոգրյալ պատճառաբանություններով, կառավարիչը խնդրել է ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը նախ արձանագրում է այն փաստը, որ հանձնաժողովը կարող է անդրադառնալ դիմումում նշված միայն այն հանգամանքներին, որոնք ապացուցվում են դիմում ներկայացնողի և կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերով, դիմումներով և ապացույցներով: Հանձնաժողովը չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որոնք հիմնված են միայն լոք հայտարարություններով և այդ հայտարարությունները կատարված են առանց համապատասխան հիմքերի: Նախ հարկ է նշել, որ երբ հանձնաժողովը անդրադառնում է կառավարչի կողմից կատարված սխալ գործողությունների դիտավորությանը, հանձնաժողովը կարող է անդրադառնալ միայն կառավարչի կողմից կատարված այն գործողություններին, որոնք կարող են ակնհայտ ցույց նշված փաստը:

Հանձնաժողովը փաստում է այն հանգամանքը, որ հանձնաժողովը չի կարող և չպետքե անդրանդառնա այնպիսի հանգամանքներին, որոնք կրում են անձնական բնույթի հարցեր:

Հանձնաժողովը հաստատում է այն հանգամանքը, որ դիմումատուի կողմից ինչպես ՀՀ արդարադատության նախարարությանը, այնպես էլ ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ին է ներկայացվել լոք դիմումը, առանաց դիմումը հիմնավորող ապացույցների:

Հանձնաժողովը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ դիմումատուի ներկայացուցիչի կողմից , հանձնաժողովի կողմից հրավիրված նիստերի ընթացքում կատարված հայտարոսրթյունները, նույնպես չեն հիմնավորվել համապատասխան ապացույցներով:Դեռ ավելին՝ հրավիրված նիստի ընթացքում, հանձնաժողովի նախագահի այն հարցին, թե արդյոք դիմումոտուի մոտ առկա են փաստաթղթեր, որով կապացուցվեն դիմումում նշված հանգամանքները, դիմումատուի ներկայացուցիչի կողմից հայտնվեց այն հանգամանքը, որ այդպիսի հիմքեր և փաստաթղթեր առկա չեն:

Այնուամենայնիվ, հանձնաժողովը անդրադառնալով կառավարիչի կողմից ներկայացված առարկությանը և կառավարիչի կողմից ներկայացրաց ապացույցներին գալիս է այն եզրակացության, որ ապրանքների իրացման գործընթացը իրականացվել է ընկերության տնօրենի կողմից, այսինքն՝ սույն բողոքը ներկայացնող անձի կողմից:Բողոքում նշված այդ դրվագի առընչությամբ, հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ ընկերության տնօրենի ապրանքների իրացման վերաբերյալ, կառավարիչին տեղեկություններ պարտավոր էր ներկայացնել հենց ընկերության տնօրենը, կոնկրետ դեպքում դիմումատուն:Այն հանգամանքը, որ ապրանքի իրացման հետևանքով, ապրանքը ձեք բերողի կողմից /այն էլ այն դեպքում երբ ապրանքի իրացումը կատարվել է ընկերության տնօրենի ամուսնու կողմից ղեկավարված ընկերությանը /ըստ ներկայացված դիմումի//, ապրանքների արժեքի արժեքը չի վճարվել սնանկության հատուկ հաշիվ, դա նույնպես ընկերության տնօրենի անգործության հետևանք է, քանի որ ապրանքների իրացման ժամանակ, ընկերության տնօրենի կողմից չեն հստակեցվել՝ չի կազմվել համապատասխան իրավական փաստաթուղթ, որով կարող էր սահմանվել վճարման ժամկետները և այդ ժամկետների անցնելու դեպքում պահանջել վաճառքից գոյացած գումարները:Ըստ հանձնաժողովի մոտ առկա նյութերի, ասռկա չեն այնպիսի ապացույցներ, որով ընկերության տնօրենը իր պարտավորությունների շրջանակներում, տեղեկացրել է կառավարչին իրացման ողջ գործընթացի մասին, այդ թվում վաճառքի իրացումից ստացված գումարի մուտքագրման մասին:Հանձնաժողովը հաստատված հանգամանքը է համարում միայն այն հանգամանը, որ դիմումատուն հենց իր դիմումով փաստում է այն հանգամանքը, որ կառավարրչին տեղեկացվել է այդ գործարքի մասին միայն 14.04.2025թ.-ին, սակայն իրացումը ըստ հանձանժողովին ներկայացրած հարկային հաշիվների տեղի է ունեցել 23.05.2022թ.-ին:Այսինքն՝ ըստ առկա ապացույցների տնօրենը, որը ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է համագործակցել կառավարչի հետ, 23.05.2022թ.-ից մինչև 14.04.2025թ., կառավարչին կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ չի հայտնել:Իսկ հայտնելուն պես, կառավարիչը 16 օր անց ներկայացրել է հայցադիմում դատարանին, գումարի բռնագանձման պահանջի մասին:Կոնկրետ դրվագի մասով, հանձնաժողովը չի անդրադառնում դիմումու նշված անձնական բնույթի հարցերին:

Ոչ ոք չպետք է իր լիազորությունների կատարումըառանց համապատասպաան օրենքի հիմքերի, ուղղակիորեն հանձնի կատարման այլ անձի, նույնիսկ ամուսնուն, իսկ այնուհետև օրենսդրից պահանջի օրենքի իբրև թե ճիշտ կիրառուջմ այդ բողոքի մասով:Սնանկության գործընթացը ինքնին շատ սպեցիֆիկ և կարևոր գործընթաց է և եթե առաջանում են արդեն կառավարիչի կողմից կոնկրետ կատարվելիք քայլեր, որոնք նույնիսկ ձեռնտու չե ընկերության տնօրենին կամ իր լիազորված անձին, չպետք է այդ բարդությունները առաջանալու դեպքում հայտնի որ որևիցե մի բանից տեղյակ չի եղել, չնայած նրան, որ տնօրենը անկախ ցանկացած պարագայում կրում է պատասխանատվություն, որոնք նախատեսված են օրենքով: Դեռ ավելին՝ ծանոթանալով գործի նյութերին ակնհայտ է դառնում, որ երեք տարի ընկերության տնօրենը գործարքի մասով չի ներկայացնել որևիցե մի բողոք դիմում ինչպես կառավարչին, այնպես էլ դատարանին կառավարիչի անգործության մասով:Երեք տարվա ընթացքում, ընկերության տնօրենքը, կոնկրետ դեպքում դիմումատուն, ապրանքների իրացման մասով, չի ներկայիացրել տեղեկություններ սնանկության գործով կառավարչին և ներկայումս հայտնում է, որ տեղյակ չի եղել գործընթացի մասին, գործընթացը իրականացրել է իբրև թե այլ անձ թեկուզ ամուսինը և ներկայումս այդ ամենի մեջ այնուամենայնիվ մեղավորությունը կառավարչինն է:

Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ ընկերության տնօրենի կողմից, 16.01.2024թ.-ին ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել միջնորդություն, ֆինասական առողջացման ծրագիրը ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու մասին:Նման պայմաններում հանձնաժողովը արձանագրում է, որ ընկերության տնօրենը, կոնկրետ դեպքում դիմումատուն բնականաբար պետք է տեղեկացած լիներ սնանկության գործընթացի մասին և այդ ժամանակ ներկայացվեր բողոք դիմում կառավարչի նկատմամբ:

Հատկանշական այն հանգամանքը, որ ըստ կարգապահական հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի, ընկերության տնօրենի կողմից, գործին ծանոթանալու դիմում է ներկայացվել ՀՀ սնանկության դատարանին դեռ 04.09.2024թ.-ին: Այսինքն՝ կառավարչի կողմից կատարված ենթադրյալ խախտումների մասին, դիմումատուն իմացել է գործի նյութերին ծանոթանալու պահից սկսած և իր բողոք դիմումների ներկայացման ժամկետները ենթակա են հաշվարկման եթե ոչ ավելի վաղ՝ 23.05.2022թ.-ից, կամ 16.01.2024թ.-ից , այլ գործի նյութերի ծանոթանալու պահից սկսած:Իսկ դիմումատուի կողմից իր դիմում բողոքը ՀՀ Արդարադատության նախարարությանն է ներկայացվել 29.09.2025թ.-ին, այսինք՝ դիմում- բողոքը ներկայացվել է մեկ տարի անց:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ դիմումատուի կողմից ՀՀ արդարադատության նախարարությանը 29.09.2025թ.-ին ուղարկված նույնանման և նույնաբովանդակ բողոք դիմումը՝ /նույն դիմումը, որը քննարկվել է սույն կարգապահական վարույթի ընթացքում/, վերահսկողական վարչության պետի գրությամբ ուղարկվել է ՀՀ սնանկության դատարանին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով, սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի գործողությունների առնչությամբ կառավարչի լիազորությունների դադարեցման հարցը քննարկելու նպատակով:Նշված դիմում բողոքը քննության է դարձվել դատարանի կողմից և ՀՀ սնանկության դատարանի 15.10.2025թ. որոշմամբ, պարտապան «Տէտ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տաթեւիկ Հարությունյանի նույնաբովանդակ միջնորդություն-բողոքն՝ սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ, մերժվել է:

Սույն գործի փաստերի, ինչպես նաեւ ներկայացված միջնորդության ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրում է, որ պարտապան «Տէտ Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 23.05.2022թ.-ից, 16.01.2024թ.-ից և 14.04.2025թ.-ից տեղեկացված է եղել իր ենթադրյալ իրավունքների խախտման մասին, սակայն դիմումատուի կողմից սնանկության գործով կառավարչի գործողությունների վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու դիմում ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածով նախատեսված ժամկետներով չի ներկայացվել:

Իսկ ինչ վերաբերվում է դիմումատուի կողմից իր դիմում բողոքում նշված անձնական և փաստաթղթորեն չհիմնավորված հայտարարություններին, ապա հանձնաժողովը դրանց չի անդրադառնում, այդ հայտարարությունները չհիմնավորված լինելու պատճառով:Իսկ ինչ վերաբերվում է դիմումատուի կողմից նշված այն հանգամանքներին, թե սնանկության վարույթի անցկացման ժամանակ տեղի է ունեցել կեղծիքներ, ապա հանձնաժողովը նշված հայտարարություններին չի անդրադառնում, քանի որ նշված հարցերը վերաբերելի չեն կարգապահական հանձնաժողովին:

Այսպիսով՝ հանձնաժողովը մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմենակ Ադամյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի ուսումնասիրելով սույն կարգապահական վարույթի նյութերը և

հիմք ընդունելով ,,Մնանկության մասին,, ՀՀ օրենքի 27,4 հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ ենթակետերի պահանջները, միաձայն կողմ քվեարկեցին և կայացրեցին որոշում, Զավեն Վարդանյանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճելու մասին:

Միաժամանակ հայտնվում է այն մասին, որ տեխնիկական պատճառներից ելնելով /ձայնագրող սարքի անսարքության/, կարգապահական նիստի ձայնագրությունները չեն պահպանվել:

Արման Սարգսյան

Արմենակ Ադամյան

Լուսինե Սարգսյան

Հարություն Գևորգյան